



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

350.4

Գորկի Ա.

Այս աշխատանքներ...

9163

891.71  
Գ-83

• 92հ. Տիւ 1904թ.

32

n8

2011

91.71-3

9-83

ԱՐԵՎԱՆԻԱՆ

ԳՈՒՅԱԿԱՆ



ՄԱԳԱԿԻ  
—ԳՈՒՅԱԿԱՆ

ԳՈՒՅԱԿԱՆԻ ԱՐԵՎԱՆ

(Եղիսաբետ)

Թարգմ. Զ. ՀԱՐԲԵՐԴԻԿԻ

Տպագործ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՊՈՒՐ

27 AUG 2006

θ. ω r q. f u n i w k u n i q r u n p u r u n i

89.71

4 - 83

۱۰۷

# ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿԻ

f.

322

570

Մի անգամ աշխանք: Խանք  
եւ իր որդին: Հակերներ:

*Թարգմ. Զ. ՀԱՍՔԵՎՈՒՆԻԿԻ*



Ը-իմյիս 1904 թ.

Տպարան „ՀԵՐՄԵՍ“ Միլ. փող. № 81

(11)

Дозволено Ценз. Тифлисъ, 10-го Марта 1904 г.

113626-42

## ՄԻԱՆԳԱՄ ԱՇԽԱՆԸ...

### (ՀԵԿԱԾ-ԵԼԱԾ ՄԱՐԴՈՒ ԱՊԱՏՄԱԾՔ)

Մի անգամ աշխանը ես լնկայ մի շատ ան-  
ախորժ և անյարմար դրութեան մէջ.—դուրս եկաւ, որ  
ես առանց կոպէկի և առանց բնակարանի էի այն քաղա-  
քում, ուր նոր էի իջել և որտեղ ոչ մի ծանօթ չունէի:

Առաջին օրերը վաճառելով հագուստից այն ամենը, առանց որի կարելի էր մի կերպ կառավարուել, ևս քաղաքից զնացի «գետարերան» կոչուած տեղը, որտեղ նաւահնանիգուտն էր և որտեղ նաւազնացութեան ժամանակ եռում էր շարժուն, աշխատանքով լի կեանքը. իսկ այժմ ամայի էր և անդորր, որովհետեւ այս բանը պատահել է հոկանմբերի վերջերին:

Թաց աւազի վրայ ոսքերս քարշ տալով և նրա  
մէջ մննդաբար ուտելիքի որևէ է մնացորդ գտնելու ակըն-  
կալութեամբ անթարթ գետնին նայելով, ես միայնակ  
թափառում էի գատարկ շխութիւնների և դարակների  
(սարկի) մէջ և մտածում էի, թէ ինչ լաւ բան է կուշտ  
լինելո...

Քաղաքակրթութեան հերկայ վիճակի մէջ մարդուն հոգու ծարաւն աւելի հեշտ է յագեցնել, քան մարդունի քաղցը: Դուք թափառում էք փողոցներում, ձեր շուրջն են շինութիւնները, որոնք վաստ չեն արտա-

բուռս և—առանց սխալուելու կարելի է ասել—լաւ են կարգաւորած և ներքուստ.—այս բանը կարող է ձեր մէջ զարթեցնել միխթարական խորհրդածութիւններ ճարտարապետութեան, առողջապահութեան և էլի ուրիշութիւն շատ խորը և վսեմ բաների մասին. ձեզ հանդիպում են շատ յարմար և տաք հազնուած մարդիկ.—Նրանք շատ քաղաքավարի են. միշտ մի կողմն են քաշում ձեզանից՝ վայելչութեամբ չկամենալով նկատել ձեր տիրապի գոյութիւնը: Աստուած վկայ, քարցած մարդու հոգին միշտ աւելի առողջ և լաւ սնունդ է ստանում, քան կուշտ մարդունը,—ահա մի տեսութիւն, որից կարելի է շատ սրամիտ եղբակացութիւն հանել յօդուս կուշտ մարդկանց...:

...Երեկոյեան դէմ էր, անձրե էր գալիս, և հիւսիսից ուժգին փշում էր հոգմբնաւում էր գատարկ գարակների և փոքրիկ խանութների մէջ, բաղսում էր հիւրանոցի լուսամուտներին, որոնք զրայից տախտակներով գամուած էին, ու գետի ալիքները նրա հարուածից փրփրում, աղմուկով ճղփում էին գետակի աւազի վրայ՝ բարձր ցցելով իրանց սպիտակ կատարները և իրար յետելից սահումանցնում էին գէպի մթին հեռաստանը՝ հուժկու թափով իրար վրայից ցատկելով: Թւում էր, թէ գետն զգում էր ձմրան մօտենալը և երկիւղից հեռու էր փախչում սասցային կապանքներից, որով հիւսիսային քամին հէնց այդ գիշերը կարող էր կաշկանդել նրան: Երկինքը կախ ընկած էր և մոայլ: Նա անդադար մաղում էր աչքին նազիւ տեսանելի մանրահատիկ անձրե, և իմ շուրջը բնութեան թախծալի տըրտութիւնը սաստկացնում էին երկու կոտրատուած և անձոնի ուրիներ և նրանց բնի մօտ հակառակ կողմը շուր տուած մի նաւակ:

Յատակը կոտրած՝ շուր տուած նաւակ և ցուրտ քամուց կողովտուած՝ վաղեմի և խղճալի ծառեր... Չորս կողմդ ամեն ինչ աւերուած, անբնակ և մեռած է. իսկ երկինքը քամում է մշտահոս արտասուրք: Մեր շուրջն ամայի է և մոայլ, կարծես, ամեն բան մեռնում է, շուտով միայն ես կենդանի կմնամ, և ինձ էլ սպանում է ցրտաշունչ մահը:

Այն ինչ այդ ժամանակ ես տամն և ութ տարեկան էի—ծաղիկ ժամանակ:

Գնում էի, ճան գնում սամն ու թաց աւազի վրայով՝ գողից ատամներս կրծտացնելով՝ իբրև օքններգ ի պատիւ քաղցի և ցրտի, և յանկարծ, իզուր ուտելու բան որանելու՝ անցնելով տափարակներից մէկի յետեր, այնտեղ տեսայ գետնի վրայ կուչ եկած մի ուրուական կանացի զգեստով, որը թրջուել էր անձրեկց և պինդ կպել էր ուսերին: Նրա գլխի վերեր կանգնելով՝ ես ուշիւուշով դիտեցի, թէ ինչ է անում: Գուրս եկաւ, որ նա ձեռքերով փորում է գարակնեցից մէկի տակը:

—Այդ ինչու համար է,—հարցրի ես:

Նա կամաց ճչաց և արագ վեր թռաւ: Այժմ, երբ նա կանգնած էր և ինձ էր նայում՝ չսելով մոխրագոյն, ահարենի աչքերը,—ես տեսայ, որ դա ինձ հասակակից աղջիկ է շատ սիրուն գէմքով, որը գժրախտարար երեք անդով կապուտակած էր: Այս փչացնում էր նրա գէմքի գեղեցկութիւնը, թէպէտ և կապոյտ բծերը դաստորուած էին զարմանալի համաշափութեամբ—մէկմէկ հատ հաւասար մեծութեամբ—աչքերի տակ, և մէկ հատ էլ մի քիչ մեծ—հէնց ուղիղ քթի վերեր: Այս համաշափութիւնից երեսում էր, որ հեղինակը վարպետ էր մարդկային գէմքը փչացնելու արուեստի մէջ:

Աղջիկը նայում էր ինձ և երկիւղը հետզհետէ ան-

ետանում էր նրա աչքերից... Ահա նա թափ տուեց ձեռքերի աւազը, ուզգեց գլխի չթեայ կապը, կծկուեց և ասաց.

—Դու էլ, երեխ, քաղցած կլինիս... Հապա, փորիր... թեամս յոգնեցին: Այնտեղ,—նա գլխով ցոյց տուեց դաշրակի կողմը—հաւանական է, հաց կլինի... ով գիտէ երջիկ էլ: Այս դարակում դեռ ևս առևտուր կայ:

Սկսեցի փորել: Իսկ սա մի փոքր սպասելուց և ինձ նայելուց յետոյ, կողքիս նստեց և սկսեց օգնել ինձ...

Մենք լուս ու մունջ աշխատում էինք: Այժմ ևս չեմ կարող ասել, այն վայրիկեանին մտաբերում էի արդեօք քրէական օրէնքները, բարոյականութեան կանոնները, սեփականութեան իրաւունքը և ուրիշ բաներ, որոնց մասին, շատ բանիմաց մարդկանց կարծիքով հարկաւոր է մտածել կեանքի բոլոր գէպերում: Կամենաւով ըստ կարելոյն ճշմարտութեան մօտ լինել, ես պէտք է խօստավանեմ, որ, կարծեմ, այնպէս խորասուլուած էի դարակի տակը փորելու գործողութեան մէջ, որ բոլորովին մոռացել էի ամեն բան, բացի այն, ինչ որ կարող էր դուրս գալ դարակից...

Երեկոյ էր: Գաղջ, գարշահոս, սառն աղջամուղը աւելի ու աւելի թանձրանում էր մեր շուրջը: Ալիքներըն աղմկում էին, կարծես, աւելի խուլ ձայնով, քան թէ առաջ. իսկ սաստկացած անձրեը շռալով թափւում էր դարակի տախտակների վրայ... Ուր որ է արդէն հնչեց գիշերապահի սուլոցը:

—Յատակ կունենայ, թէ ոչ.—կամաց հարցրեց իմ օգնականուհին: Ես չհասկացայ ինչի մասին է խօսքը և լուս էի...

—Սառւմ եմ, դարակը յատակ կունենայ: Եթէ ունի, մենք իզուր ենք չարչարում: Փոսը փորեցինք—

յետոյ, կարելի է, այնտեղ հաստ տախտակներ կան... լուսպէս պոկիս: Աւելի լաւ է, կողպէքը կոտրենք... կողպէքը վատն է:

Կնոջ զիլում խելացի միտք չէ ծագում. բայց ինչպէս տեսնում էք, ազնուամենայնիւ ծագում է... Ես միշտ թանկ եմ գնահատել լաւ խորհուրդը և միշտ աշխատել եմ կարելիին չափ օգտուել նրանով:

Կողպէքը զանելով՝ ես քաշեցի, պոկեցի օղակների հետ միասին... Մեղսակիս մի ակնխթարթում կորացաւ և օձի պէս գալաքուելով՝ թռաւ դարակի քառանկինի բացուածքի մէջ: Այնտեղից հնչեց նրա խրախուսիչ բացականչութիւնը.

—Կեցցիս:

Կնոջ փոքրիկ գովասանքն ինձ համար աւելի թանկ արժէ, քան տղամարդու ամբողջ ներբողը. թէ կուզ նա այնքան պերճախօս լինի, որքան հին և նոր հուեորները միասին: Բայց այն ժամանակ ես այնքան սիրալիր տրամադրութեան մէջ չէի, որքան այժմ, ուստի իմ ընկերունու հաճոյախօսութիւնն անուշաղիր թողնելով՝ ես սրտատրով կարճ հարց տուի.

—Բան կնյ:

Նա սկսեց միապաղադ ձայնով թուել իր գիւտերը.

—Շշերով լի զամբիւլ... դատարկ տոպրակներ... Հովանոց... Երկաթէ զոյլ...

Պւտելու բան չկար: Զգում էի, որ յոյսերս խորխորտակւում էին... Սակայն նա յանկարծ աշխոյժ ձայնով բացականչեց.

—Ծէը՛, գտայ...

—Ի՞նչ

—Հաց... կլոր հաց... ափսոս թրջուել է... բռնիր: Ոտքերիս մօտ զիրուեց կլոր հացը և անմիջապէս

դուրս թռաւ նա—իմ հերոս ընկերուհին: Ես խսկոյն կտրեցի մի կտոր, բերանս կոխեցի և ծամում էի...:

—Հապա, ինձ էլ տուր.., Հա, հիմայ այստեղից պէտք է հեռանալ: Ո՞ւր գնանք: Նա քննողաբար չորս կողմ նայեց մթութեան մէջ... Մութ էր և ժժմունք...

—Ահա այնտեղ մի նաւակ է շուռ տուած... զը նանք այնտեղ:

—Գնանք.—ու մենք գնացինք՝ ճանապարհին կըտրատելով մեր աւարը և նրանով բերաններս լցնելով... Անձրեւ սաստիանում էր, գետն աղմկում, որտեղից որ է, մեր համանում էր երկարատես ծիծաղաշարժ սուլոց.— ասես թէ մեծ և աներկիւղ մի մարդ շուացնում ծաղը որում էր երկրիս վրայ տիրող բոլոր կարգերը և այս աշնանային վատթար գիշերը և՛ մեզ՝ նրա երկու հերոսներիս... Սիրտս ճմլում էր այդ սուլոցից. սակայն չնայելով դրան՝ ես ազահութեամբ ուտում էի, ինձանից պակաս չէր ուտում նաև աղջիկը, որ գալիս էր ձախ կողքիցս:

—Անունդ ի՞նչ է,—չգիտեմ ինչու հարցը նրան:

—Նատաշա,—կարձ պատասխանեց նա՝ չըպչը պացնելով:

Ես նայեցի նրան—սիրտս կտրատուեց. նայեցի առաջն՝ մթութեան մէջ, և—ինձ թուաց, թէ իմ ճակատագրի ողու ծաղրալի գէմքը սառն և անորոշ ժըպտում է ինձ...:

. . . Անձրեն անդադար կաթկթում էր նաւակի տախտակին և նրա մերմ ձայնը զարթեցնում էր տխուր մտածմունք. իսկ քամին սուլում էր՝ անցնելով կոտրած տախտակի ճեղքից, որտեղ անդադար շարժում էր մի

տաշեղ և չխկչիսկացնում էր անհանգիստ ու խղճուկ ձայնով: Գետի ալիքները ճղփիւնով զարնուում էին ափին և մի այնպիսի միապաղապ յուսահատ ձայն էին հանում, որ, կարծեն, պատմում էին մի անտանելի տաղտուկ բան, որ նրանց զզուացրել էր, մի այնպիսի բան, որից նրանք կուզինային խորս տալ և որի մասին այնուամենայնիւ հարկաւոր է խօսել. Անձրեկի աղմուկը միացել էր ալիքների ճղփիւնի հետ և ծաւալում էր շուռ տուած նաւակի վրայ իրեն մի հառաչանք, երկար, անվերջ, ծանր հառաչանք, որ հանում է երկիրը, որ վիրաւորուած՝ խոնջացած էր տաք ու պայծառ ամբան և ցուրտ, մշուշապատ ու գաղջ՝ աշնան այդ մշտնջենական փոխարինութեամբ: Ու հողմն անդադար վչում էր ամայի գետակի և փրփրագէղ գետի վրայով, վչում էր և երգում թախծալի երգեր:

Նաւակի տակ մեր ապաստանը գուրկ էր որ և է յարմարութիւնից. այնտեղ նեղուածք էր, խոնաւ, նաւակի յատակի ծակերից կաթկթում էին անձրեկ մանր, սառը կաթիւները... Քամին ներս էր փշում: Մենք լուռ նստած էինք և ցրտից գողգողում: Յիշում ևմ, քունս տանում էր: Նատաշան կուչ գալով՝ մէջքը գէմ տուեց նաւակի եղերքին: Զեռքերը փաթթաթելով ծնկներին և կզակը նրանց վրայ գնելով՝ նա աչքերը չսած՝ շարունակ նայում էր գետին...: Նրա գէմքի սպիտակութեան վրայ աչքերը շատ խոշոր էին թւում. նրա տակի կապոյտ բծերի պատճառով: Նա անշարժ էր. և այդ անշարժութիւնն ու լուռթիւնը—զզում էի—հետզհետէ զարթեցնում էին իմ մէջ երկիւղ իմ հարևանուհուց... Ուզում էի խօսել նրա հետ, բայց չգիտէի՝ ի՞նչից սկսէի: Նա ինքն սկսէց.

—Էյ անիծուած կեանք...—պարզ, որոշ և խորին

համոզմունքով արտասահնեց նա:

Սակայն դա գանգատ չէր: Այս խօսքերի մէջ շատ անտարբերութիւն կար, որ գանգատի տեղ անցնէր: Մարդը պարզապէս մտածեց, ինչպէս կարող էր, մտածեց ու հասաւ որոշ եղբակացութեան, որ և արտասահնեց և որին ես չէի կարող հակածառել առանց ինձ հակասելու: Ուստի ես լուռ էի: Իսկ նա, որպէս թէ ինձ չը նկատելով՝ շարունակ նստած էր անշարժ:

—Գոնէ սատկէինք—պլճնէինք...—նորից խօսեց Նատաշան՝ այս անգամ կամաց և մտածման մէջ: Ու դարձեալ նրա խօսքերի մէջ չէր հնչում բողոքի շեշտը: Երեսում էր, որ մարդը կեանքի մասին մտածելով՝ իր վրայ նայեց և հանգիստ եկաւ այն եղբակացութեան, որ կեանքի ծաղրից իրան պաշտպանելու հասար նա անկարող է մի ուրիշ բան անել, քան այն, որ «սատկի ու պլճնի»:

Այս սատիճանի պայծառ մտածմունքից ես անստանելի ցաւ զգացի և սո զգում էի, որ եթէ դարձեալ լըռեմ, հաւանական է, լաց կլինիմ... Իսկ լալ մի կնոջ առաջ—այդ ամօթ կլինէր, մանւաւանդ, որ նա ինքը չի լալիս: Վճռեցի խօսել նրա հետ:

—Այդ ովէ ծեծել քեզ,—հարցրի ես՝ չկարողանաւով աւելի խելացի և վայելուչ բան գտնել խօսելու:

—Պաշկան, ով,—բարձր ձայնով պատասխանեց նա: —Այդ ովէ...

—Սիրականս, ... մի հացավաճառ կայ...

—Յաճանի նա քեզ ծեծում է...

—Յաճանիս... չէնց որ հարբի—կծեծի:

Ու յանկարծ դէպի ինձ թերուելով՝ նա սկսեց պատմել իր, Պաշկայի և իրանց մէջ եղած յարաբերութեան մասին: Ինքը «դուրս ընկած աղջիկ է, որոնք...»

—Իսկ նա հացավաճառ է շիկակարմիր ընչայքով, և շատ լաւ նուագում է զաշնակարան ( гарմոնիկա): Նա գալիս էր իր մօտ «հանրատունը». Իրան շատ գուր եկաւ, որովհետեւ ուրախ մարդ է և մաքուր է հազնւում: Վերաբիու (ոստակ) ունի տան և հինգ մանէթանոց և կօշիկներն էլ «ծալքերով»... Այս պատճառով էլ ինքը սիրահարուեց նրա վրայ, և նա զարձաւ իր «վստահելին», իսկ երբ նա զարձաւ իր «վստահելին», սկսեց իրանից անսել այն փողերը, որ իրան տալիս էին ուրիշ հիւրեր անուշեղին առնելու, և այդ փողերով հարբելով՝ սկսեց ծեծել իրան. այդ, սահնք, գեռ ոչինչ,—սկսում էր հէնց իր աչքի առաջ «քծնուիլ» ուրիշ աղջիների...

—Հապա ինձ համար վիրաւորական չէ այս: Ես ուրիշներց վատ չեմ... Ասել է, թէ նա, այդ միրը, ծաղրում է ինձ: Երեկ չէ՝ միւս օրը, այ, ես տանտիկնողից արձակուրդ իննդրեցի զրօննելու համար. զնացի նրա մօտ, տեսնեմ—Դուռնեան հարբած նստած է: Ինքն էլ նրա կողքին: Ասում եմ նրան. «Լիրը անամօթ, սրիկայ»: Նա ինձ սաստիկ ծեծեց. քացիով տուեց, մագերիցս քաշեց—ամեն կերպ ծեծեց... Այդ գեռ ոչինչ: Այ, շորերս բոլորը պատառուեց... հիմայ ի՞նչ անեմ: Ի՞նչպէս տանտիկնող մօտ գնամ: Բոլորը պատառուեց. շրջազգեստ էլ, վերնազգեստ էլ—զեռ բոլորովին նոր էր... Մի հնգանոց էին տալիս... Գլխէ կապս էլ դէն քաշեց... Աստուած իմ: Հիմայ ի՞նչ անեմ:—յանկարծ հեկեկաց նա թախծալի՝ ընդհատ ձայնով:

Քամին էլ փշում էր՝ հետպհետէ սաստկանալով և ցրտելով... Աստմներս գարձեալ սկսեցին իրանց պարը՝ Նատաշան էլ ցրտից կուչ եկաւ և այնքան մօտեցաւ

ինձ, որ ես մթութեան մէջ տեսնում էի նրա աչքերի փայլը...

—Ի՞նչ լրբերն էք դուք բոլոր տղամարդիկդ: Զեռքը ընկնէիք—ոտնատակ տայի ձեզ բոլորիդ, ջարդ ու բուրդ անէի... Զեղանից որը կուզէ սատկէր, երեսին թքէի և չխղճայի: Լիբր հրէշներ... Շան պէս քծնում էք, քծնում, պոչերդ այս ու այն կողմ շարժում, իսկ երբ տիսմարի մէկը ձեզ անձնատուր է լինում—պրծաւ: Իսկոյն նրան ոտնատակ էք տալիս... Լիբր, անզգամներ...

Նա թափում էր շատ ճոխ հայհոյանքներ, բայց նրանց մէջ ոյժ չկար. ես չեմ լուսմ նրանց մէջ ոչ թշշնամանք, ոչ առելութիւն դէպի «լիբր անզգամները»: Նրա խօսքերի տօնը բովանդակութեան համեմատ աղդու չեր—և ձայնը տիսուր էր ու շեշտից դուրի:

Բայց ե այնպէս այս ամենն ինձ վրայ ազգեց աւելի զօրեղ կերպով, քան ամենապերճախօս և համոզիչ յոռետես զբքերն ու ճառերը, որ ես շատ եմ լսել և առաջ, և յետոյ, և մինչև օրս էլ լուսմ եմ և կարդում: Եւ այս, գիտէք, այն պատճառով, որ մեռնողի հոգեվարքի տագնապը միշտ աւելի բնական և զօրեղ է, քան մահուան ամենաճշգրիտ և գեղարուեստական նկարագիրը:

Ես շատ վատ էի զգում ինձ,—հաւանական է, աւելի ցրտից, քան իմ հարևանունու ճառերից: Ես կամաց սկսեցի տնքտնքալ և ատամներս չըխէրիկացնել:

Ու զրեթէ նոյն ակնթարթում ես զգացի վրաս երկու սառն փոքրիկ թաթիկներ—նրանցից մէկն հպեց պարանոցիս, միւսը դէմքիս, և միենոյն ժամանակ հընչեց հոգատար, խաղաղ քաղցր ձայնը.

—Ի՞նչ պատահեց քեզ:

Ես պատրաստ էի մտածել, որ այդ հարցն ինձ

տուողը ուրիշն է, և ոչ Նատաշան, որ հէսց նոր յայտնեց, որ բոլոր տղամարդիկ լիրը են, և նրանց բոլորի անկումը ցանկացաւ: Բայց նա սկսեց խօսել արագարագ և շտապելով.

—Ի՞նչ եղաւ քեզ, ա: Ցուրտ է, ինչ է: Մրսում ես: Ախ դու... նստել է ու պապանձուել: Շուտ կասէիր էլի, որ ցուրտ է... Դէհ... պառկիր գետնին... մէկնուիր... Ես էլ կպառկեմ... ահա: Հիմա փաթաթուիր ինձ... պինդ... Ա՛յ, այժմ ահա, կարելի է, տաք լինի... Յետոյ էլ կոնսակ կոնսակի կտանք—կպառկենք: Մի կերպ կլուսացնենք... Ի՞նչպէս, սկսեցիր խմել—հարբել, ի՞նչ է: Գործից համեցին... Ոչինչ, փոյթ չէ...

Նա ինձ միսիթարում էր... Նա ինձ քաջալերում էր... Երիցս անիծուած լինիմ: Ո՛քան ինձ ուղղուած հեղնութիւն կար այս իրողութեան մէջ: Մի մտածեցէք: —Ախը այդ ժամանակ ինձ համար լուրջ հոգացողութեան առարկայ էր մարդկութեան ճակատագիրը. Ես երազում էի ընկերավարական կազմի բարեշրջութեան քաղաքական յեղաշրջումների մասին, կարդում էի զանազան սատանայական խորիմաստ գրքեր, որոնց մըտքերի խորութիւնն, հաւանական է, իրանց հեղինակներին էլ անհասկանալի էր,—ես այդ ժամանակ ամեն կերպ աշխատում էի պատրաստուել «խոշոր հասարակութեան ներգործական ոյժ» լինելու: Ինձ թւում էր նոյն իսկ, թէ ես մասամբ կատարել եմ զերը. յամենայն զէպս այն ժամանակ իմ վրայ ունեցած հայեացքով արդէն հասել էի այն եղրակացութեան, որ ես առանձնապէս գոյութեան իրաւունք ունիմ, իրեւ կեանքի համար անհրաժեշտ մի մեծութիւն, որ լիովին ընդունակ է նրա մէջ իր խոշոր պատմական գերը կատարելու: Եւ ահա ինձ տաքացնում էր իր մարմնով ընկած կինը, գըժ-

բախտ, ծեծուած, հալածուած մի արարած, որ կեանքի  
մէջ տեղ չունի, արժէք չունի, և որին ես գլխի շընկայ  
աւելի վաղ ձեռք միկնելու, քան ինքն ինձ օգնեց. իսկ  
եթէ նոյն իսկ գլխի ընկնէի, հազիւ թէ կարողանայի  
որ և է բանով նրան օգնել:

Ա՛խ, ես պատրաստ էի մտածելու, որ այս բոլորը  
երազ է, մի անմիտ, մի գժնդակ երազ...

Սակայն, աւաղ, ես անկարող էի այդպէս մտածել,  
որովհետեւ ինձ վրայ թափւում էին անձրեկ սառն կա-  
թիները, կրծքիս պինդ հպած էր կնոջ ջերմ կուրծքը,  
և երեխի փշում էր նրա տաք շնչառութիւնը, թէպէտ  
և օգու թեթե բուրմունքով... բայց այնպէս կինդանա-  
ցնող... Ուսնում, հառաջում էր հողմը, շռալով թափ-  
ւում էր անձրել, ճղփում էին ալիքները, իսկ մենք եր-  
կուսով իրար զրկախառնուած՝ այնուամենայնիւ ցրտից  
գողում էինք: Այս բոլորը ճշգրիտ իրողութիւնն էր, և  
ես համոզուած եմ, որ ոչ մի այսպիսի ծանր, վատ-  
թար երազ չէ տեսել, ինչպէս այս իրականութիւնը:

Իսկ նատաշան շարունակ խօսում էր, խօսում էր  
այնպէս սիրալիք, կարեկցարար, որպէս կարող են խօ-  
սել միայն կանայք: Նրա անմիղ, քաղցր խօսքերի աղ-  
դեցութեան տակ ներսս հանդարա վառուեց մի կրակ,  
որից մի բան հալուեց սրտիս մէջ:

Այն ժամանակ աչքերիցս կաթիլ-կաթիլ հոսեց  
յորդ արտասուք, որ լուաց—սրբեց սրտիցս մինչև այդ  
գիշեր ժողովուած ոխակալութիւնը, թալսիծը, յիմա-  
րութիւնն ու կեղտը... իսկ նատաշան ինձ յորդո-  
րում էր.

—Դէհ, բաւական է, փոքրիկս, մի բղաւիր, բա-  
ւական է: Ասուած կտայ—կուզզուես, զարձեալ գոր-  
ծի կլինես... և էլի այսպիսի բաներ...

Ու շարունակ համբուրում էր ինձ... շատ և շատ,  
անհաշիւ, ջերմագին...

Դրանք առաջին կանացի համբոյրներն էին, որ  
կեանքը մատուցանում էր ինձ, և դրանք ամենալաւ  
համբոյրներն էին, որովհետեւ բոլոր յետագայ համբոյր-  
ները սարսափելի թանկ արժէին և իսկապէս ոչինչ չէ-  
ին տալիս ինձ:

—Դէհ, մի բղաւիր, յիմար: Վաղը ես քո գործը  
կհոգամ, եթէ ոչ մի տեղ չունիս...—ասես թէ երազիս  
մէջ լսում էր նրա մեղմ, համոզիչ քչփչոցը...

Մինչև լոյս մենք իրար զրկախառնած պառկած  
էինք...

Իսկ երբ լուսացաւ, նաւակի տակից դուրս եկանք  
և քաղաք գնացինք... Յետոյ մտերմարար իրար հրա-  
ժեշտ տուեինք և այլ ևս երբէք չճանդիպեցինք իրար,  
թէպէտ ես վեց ամիս շարունակ ամեն ծակ ու ծուկ  
ընկած՝ որոնում էր այդ գողովարիկ նատաշային, որի  
հետ անց կացրի նկարագրածս զիշերը մի անգամ աշ-  
նանը...

Եթէ նա մեռել է արդէն—որքան լաւ է այդ նրա  
համար—հանգիստ նրա ոսկրներին: Իսկ եթէ կինդանի  
է—խաղաղութիւն նրա հոգուն: Եւ թող զարթնանայ  
նրա հոգու մէջ անկման զիտակցութիւնը... որովհետեւ  
դա կլինէր կեանքի համար աւելորդ և անպառը տա-  
ռապանք...

1895



## ԽԱՆՀԵ ԵՒ ԻՐ ՈՐԴԻՆ

Արդիմում խան էր Մօոլայմա-էլ-Ասվաբը և  
ունէր նա մի որդի Թոլայկ Ալհալա...

Արբուտուս ծառի բաց—կինամոնագոյն ընին թինկլ  
տալով՝ թաթար կոյր աղքատն այս խօսքերով սկսեց  
յիշատակարաններով հարուստ թերակղզւ վաղեմի լե-  
զեղնդաններից մէկը: Խոկ պատմիչի շուրջը՝ խանի աւե-  
րուած ապարանքի բեկորների վրայ նստած էին մի  
խումբ թաթարներ՝ գոյնսղոյն ոսկեկար խալաթներ և  
թիւրիթներ հագած: Գիշեր էր, և արևը հանդարտ իշ-  
նում էր ծովը. Նրա ոսկեզօծ ճառագոյթները թափան-  
ցում էին աւերակների շուրջը բուսած թանձր մոյզ սա-  
ղարթը և վառ շողերով ընկնում էին մամուռապատ քա-  
րերի վրայ, որոնք պատած էին բաղեղի կառչող սա-  
ղարթով: Քամին աղմկում էր վաղեմի շնարների կոյտի  
մէջ, և նրանց տերեններն այնպիսի շրջին էին  
բարձրացնում, ասես, օդի մէջ ջրի անտեսանելի կոհակ-  
ներ էին խորհում:

Կոյր աղքատի ձայնը թոյլ էր և գողղոջ. իսկ նրա ապառաժ դէմքն իր խորշումներով ոչինչ չէր արտա-  
յայտում, բացի անդորրութիւնը: Սերտած բառերն  
ազրիւրի պէս բզիսում էին իրար յետևից, և ունկնդիր-  
ների առաջ հանդէս էր գալիս անցած-դնացած՝ զօրեղ  
զգացմունքներով հարուստ օրերի պատկերը:

—Խանը ծեր էր, —ասում էր կոյրը, —բայց հարեմում կանայք շատ ուներ: Ու նրանք սիրում էին ծերունուն, որովհետև նրա մէջ դեռ ևս կար բաւական ոյժ ու կրակ, և նրա գգուանքը զարթեցնում էր հեշտանք և այրում էր. իսկ կանայք միշտ պիտի սիրեն նրան, ով գիտէ ջերմ գգուել, թէկուզ նա լինի ալոր, թէկուզ խորշոմերով ծածկուած լինի նրա գէմքը: —Գեղեցիկը սիրոյ ոյժն է, և ոչ թէ քնաքոյշ մոբթը կամ այսերի կարմրութիւնը:

Խանին սիրում էին ամենքը. իսկ նա սիրում էր մի կազակ աղջկայ՝ Դնէպրի տափաստաններից և միշտ նրան աւելի սիրով էր գլւում, քան հարեմի միւս կանանց, իր հարեմի, որտեղ կար երեք հարիւր կին զանազան երկրներից. և նրանք բոլորը գեղեցիկ էին, ինչպէս գարնան ծաղիկներ, և բոլորը երջանիկ: Խանը հրամայում էր պատրաստել նրանց համար շատ համագամ խորտիկներ և նրանց թոյլ էր տալիս միշտ, երբ կամենան, պարել և խաղալ...

Իսկ իր սիրուհուն նա յաճախ կանչում էր զգեստ՝  
որտեղից երևում էր ծովը, և որտեղ նրա համար  
կար ամեն բան, ինչ որ հարկաւոր է կնոջը, որ նա ու-  
րախ լինի—քաղցր կերպուր և զանազան գործուածք-  
ներ, և ոսկի, և ամեն գոյնի ակնեղէն, և երաժշտու-  
թիւն, և փառաւոր երկրներից բերած հազուագիւտ  
թշուններ, և սիրահար խանի տարփալի գզուանքները:  
Այդ զգեստում նա ամբողջ օրեր զբաղւում էր նրանով՝  
հանգիստ վայելելով իր վաստակաւոր կեանքի վերջա-  
լուսին և գիտենալով, որ իր որդին՝ Ալհալլա խանու-  
թեան փառքը չի նսեմացնէ՝ զայլի պէս ուսւաց տա-  
փաստանները ոտնատակ տալով և միշտ այնտեղից հա-  
րուստ աւարով, նոր կանանցով և նոր փառքով՝ վերա-



գանհալով և միշտ իր յետից սարսափ և մոխիր, դիւն և արիւն թողնելով:

Մի անգամ նա՝ Ալհալան, վերադարձաւ արշաւանքից. մեծ տօնախմբութիւն սարքեցին ի պատիւ նոռա. թերակղու ըոլոր միրզաները հաւաքուեցին, խաղեր և խրախճանք սարքեցին և իրանց բազկի ոյժը փորձեցին՝ նետեր էին արձակում գերիների աչքին ու նորից կերուխում անում՝ փառարանելով թշնամու թարսափ և խանութեան նեցուկ քաջ Ալհալին: Իսկ ծերունի խանն անչափ ուրախ էր որդու փառքը տեսնելով. նրան՝ ծերունուն, հաճելի էր տեսնել, որ իր որդին այլպէս կտրիմ է, և գիտենալ, որ իր մահից յետոյ խանութիւնը կանցնի ամուր բազուկների...

Այս ըոլորը հաճելի էր նրան, և ահա նա՝ կամենալով որդուն ցոյց տալ իր սիրոյ սատիճանը, սասց նրան բոլոր միրզաների և բէկերի ներկայութեամբ,— այստեղ, խնձորքի մէջ, բաժակը ձեռին՝ սասց.

—Բարի զաւակս, Ալհալլա: Փառք Ալլահին, և թող փառարանուի նրա մարզարէի անունը:

Ու ամենքը փառարանեցին մարզարէի անունը խրոխտ ձայներով: Այն ժամանակ խանն սասց.

—Մեծ է Ալլահը: Քանի դեռ կենդանի եմ, Նա յարութիւն տուեց իմ մեռած երիտասարդութեանը յանձին իմ քաջ որդու. և ահա տեսնում եմ ես իմ ծեր աչքերով, որ երբ նրանցից յաւիտեան ծածկուի արեւը, — և երբ որդերն ուտեն իմ սիրաը—ես կենդանի կլինեմ իմ որդու մէջ. մեծ է Ալլահը և Մուհամմէդը, նրա խսկական մարզարէն: Լաւ զաւակ ունիմ. բաղուկն—ամուր, սիրտը—քաջ և միտքը—պայծառ... Ի՞նչ ես կամենում ստանալ քո հօր ձեռքից, Ալհալլա: Ասա,

և ես կտամ քեզ ամեն ինչ, քո ցանկութեան համաձայն...

Ու դեռ չէր լոել ծեր խանի ձայնը, որ ոտքի կանգնեց թօլայկ-Ալհալան և ասաց՝ փայլեցնելով աչքերը, ուրոնք ուեւ էին՝ ինչպէս ծովը գիշերով, և վառվառն՝ ինչպէս լեռնային արծուի աչքերը.

—Տներ-ինձ Կապակի աղջիկը, հայր հրամանատար: Լոեց խանը—քիչ լոեց. այնքան, որքան հարկաւոր էր սրտի փղծուկը զապելու համար, և ապա անյողոյողդ ձայնով բարձր ասաց.

—Առ: Խնջորքից յետոյ գու կառնես նրան:

Ամբողջ մարմնով բռնկեց խիզախ Ալհալան: Ցընծութեամբ փայլեցին նրա արծուի աչքերը, ոտքի կանգնեց ամբողջ հասակով և ասաց խան հօրը.

—Գիտեմ, ինչ ես նուիրում ինձ, հայր հրամանատար: Ես այդ գիտեմ... Ես քո ստրուկն եմ—ըստ որդին: Քամիր արիւնս ժամը մի կաթիլ—քսան մահով կեանքս կտամ քեզ համար:

—Ինձ ոչինչ հարկաւոր չէ, —ասաց խանը և կըրծարին խոնարհեց ալեոր զլուխը, որ պսակուած էր երկար տարիների և շատ քաջազրութիւնների փառքով:

Շուտով նրանը վերջացրին խրախճանքը և երկուսն էլ լուռ՝ միասին ապարանքից հարեմ գնացին:

Խաւար գիշեր էր. ոչ աստղերը և ոչ լուսինը չէին երևում ամերի յետեկից, որոնք թանձր գորդ ծածկել էին երկինքը:

Մթութեան մէջ երկար գնում էին հայրը և որդին, և ահա խօսեց էլ-Ասվար խանը:

—Օրըստօրէ խաւարում է իմ կեանքը, և աւելի ու աւելի թոյլ բարախում է իմ զառամեալ սիրտը ու իմ կրծքում աւելի ու աւելի պակասում է կրակը: Կեան-

քիս լոյմն ու ջերմութիւնն այդ աղջկայ տարփալի գգուանքներն էին... Ասա ինձ, Թօլայկ, ասա, մըթէ նա այդ չափ հարկաւոր է քեզ: Ա'ո հարիւր կին, առ իմ բոլոր կանանց այդ մէկի փոխարէն...

Լուռ էր Թօլայկ-Ալհալլան և հառաչում էր:

—Քանի՞ օրուայ կեանք է մնում ինձ: Երկրիս վրայ ևս քիչ օրուայ կեանք ունիմ... Կեանքիս վերջին ուշախութիւնը նա է,—այդ ոռուս աղջիկը: Նա ինձ լաւ գիտէ. նա ինձ սիրում է. Նրանից յետոյ էլ ով կսիրէ՞ ինձ ծերուկիս, ով: Ոչ ոք, ոչ ոք, Ալհալլան...

Լուռ էր Ալհալլան...

—Ի՞նչպէս կարող եմ ապրել՝ գլուխնալով, որ դու գրկում ես նրան, որ նա համբուրում է քեզ: Կնոջ համար մենք ամենքս տղամարդ ենք, որդեակս... Ցաւալի կինին կեանքիս վերջին օրերը... Աւելի լաւ էր, մարմիս վրայ բացուէին իմ հին վէրքերը, Թօլայկ, և թունաւորէին արիւնս. թող սեւ լինէր այս զիշերը ինձ համար, որդեակ իմ...

Որդին լուռ էր... Նրանք կանգ առան հարեմի դռանը և լուռ ու մունջ գլուխները խոնարհած՝ կանգնեցին նրա առաջ: Շուրջը խաւար էր տիրում, և ամպերը սահում էին երկնքի երեսին. իսկ քամին ցնցելով ծառերը՝ աղմկում էր, կարծես, երգում էր...

—Վաղուց է, սիրում եմ նրան, հայր...—հանգարտ ասաց Ալհալլան:

—Դիտեմ... և գիտեմ, որ նա քեզ չի սիրում...

—ասաց խանը:

—Սիրտս կտրատում է, երբ ես մտածում եմ նրա մասին:

—Իսկ իմ զառամեալ սիրտս ինչով լի է այժմ:

Ու դարձեալ լուցին: Հառաչեց Ալհալլան.

—Երկի, ճշմարիտ ասաց ինձ խմաստուն մօլան՝ աղամարդուն միշտ վասնգաւոր է կինը. եթէ նա գեղեցիկ է, ուրիշների մէջ ցանկութիւն է զարթեցնում աիրելու նրան, իսկ ամուսնուն մատնում է խանդի տանջանքներին. եթէ տգեղ է, ամուսինը գեղեցիկներին տեսնելով տանջում է նախանձից. իսկ եթէ ոչ գեղեցիկ է, և ոչ տգեղ—մարդուն թւում է գեղեցիկ, և երբ նա հասկանում է, որ սխալուած է, դարձեալ տանջում է նրա՝ այդ կնոջ երեսից...

—Խմաստութիւնը սրտի ցաւի դարման չէ...—ասաց խանը:

—Խնայենք իրար, հայր...

Խանը գլուխը բարձրացրեց և տիրութեամբ նայեց որդուն:

—Սպանենք նրան...—ասաց Թօլայկը:

—Դու բեզ աւելի ես սիրում, քան ինձ և նրան,—մտածելով՝ հանդարտ ասաց խանը:

—Դու էլ:

Ու դարձեալ լուցին:

—Այս, ես էլ.—տիրուր-տրատում ասաց խանը: Վըշտից նա երեխայ էր դարձել:

—Ի՞նչ արած. սպանենք:

—Զեմ կարող քեզ տալ, չեմ զարով—ասաց խանը:

—Իսկ ես այլևս չեմ կարող հանդուրժել—հանիք իմ սիրտս կամ տուր ինձ նրան...

Խանը լուռ էր:

—Կամ ծովը ձգենք նրան:

—Ծովը ձգենք նրան,—կրկնեց խանը որդու խօսքերը՝ ինչպէս նրա ձայնի արձագանքը:

Եւ այն ժամանակ նրանք մտան հարեմը, որտեղ նա քնած էր յատակին՝ փարթամ գորգի վրայ: Հայր և

որդի կանգ առան նրա առաջ և նայում էին, երկար նայում էին նրան: Ծերունի խանի աչքերից արցունքները հոսում էին արծաթափայլ մօրուքին և նրա մէջ փայլում էին՝ ինչպէս մարդարիտ: իսկ որդին կանգնած էր, փայլեցներով աչքերը և ատամները կրծտացնելով, կիրքը զսպելով՝ զարթեցրեց աղջկան: Արթնացաւ նաև նրա բնքոյշ վարդագոյն դէմքին արշալոյսի պէս շողշողացին նրա աչքերը՝ ինչպէս տերեփուկ: Նա չնկատեց Ալհալային և իր վարդագոյն շրթունքներն ուղղեց խանին.

—Համբուրիր ինձ, ծեր արծիւ:

—Վեր կաց, պատրաստուիր... կդաս մեզ հետ...

—կամաց ասաց խանը:

Այստեղ նա տեսաւ Ալհալային և արցունքն իր արծուի աչքերին, ու — խելացի էր նա — ամեն բան հասկացաւ:

—Գալիս եմ, —ասաց նա: —Գալիս եմ: Ո՛չ մէկին և ոչ միւսին —այսպէս էր որոշել: Այդպէս էլ պիտի վճռեն հոգով արիները: Գալիս եմ:

Ու լուս ու մուռնջ երեքը միասին գնացին դէպի ծովը, նեղ շավիզներով էին գնում, քամին աղմկում էր, խուլ աղմկում...

Քնքոյշ էր նա —աղջիկը. շուտով յոգնեց. բայց և հպարտ էր —չէր կամենում նրանց ասել այդ:

Եւ երբ խանի որդին նկատեց, որ նա յետ է մընում նրանցից —ասաց նրան.

—Վախեննում ես.

Նա փայլեցրեց աչքերը նրա վրայ և ցոյց տուեց նրան արինաշաղախ ոտքը...

—Արի քեզ տանեմ. — ասաց Ալհալան՝ դէպի նա պարզելով ձեռքերը: Սակայն աղջիկը փաթաթուեց իր

ծեր արծուի պարանոցով: Խանը վերցրեց նրան՝ ինչպէս փետուր՝ իր բազուկների վրայ և տարաւ. իսկ նա խանի բազուկների վրայ նստած՝ նրա դէմքից հեռացնում էր ծառերի ճիւղերը, վախմնալով՝ չլինի թէ նրանք ծերի աչքին ընկնեն: Երկար զնացին նրանք. և ահա արդէն հեռուից լսում էր ծովի ճողիփիւնը: Այստեղ թօյլակը —սա գնում էր նոյն շաւիղով՝ նրանց յետեկից —ասաց հօրը.

—Թոն ինձ առաջ անցնեմ, ապա թէ ոչ ուզում եմ դաշոյն միսել քո պարանոցը:

—Անցիր: Աստուած կը յատուցանէ՝ քեզ այդ ցանկութեան փոխարէն, թէ կներէ —իր կամքն է. —իսկ ես, հայրդ, ներում եմ քեզ: Ես գիտեմ, թէ ինչ ասել է սիրել:

Եւ ահա նա —ծովը՝ նրանց առջևն է, այստեղ՝ ներքելն է, թանձր, սկ և առանց եղերքի: Խուլ ճղփում են՝ նրա ալիքները ժայռի տակը, և խաւար է այստեղ՝ ներքելը, և ցուրտ է, և սարսափելի:

—Գնաս բարեաւ, — ասաց խանը՝ համբուրելով աղջկան:

—Գնաս բարեաւ, — ասաց Ալհալան և զլուխ տուեց նրան.

Աղջիկը նայեց այն կողմը, ուր երգում էին ալիքները, և թեթևակի յետ շարժուեց՝ ձեռքերը կրծտին դնելով:

—Զգեցէք ինձ, — ասաց նրանց...

Ալհալան դէպի նա պարզեց բազուկները և հեկեկաց. իսկ խանն առաւ նրան ձեռքերին, պլինդ կրծտին սեղմեց, համբուրեց և, բարձրացնելով իր գլխի վերեր ժայռից ցած նետեց:

Այստեղ կարկաչում և ճղփում էին ալիքները, և

այնքան աղմուկ էր, որ նրանք երկուսն էլ չլսեցին, երբ  
նա ջուրն ընկաւ: Ոչ աղաղակ լսեցին և ոչ ուրիշ ձայն:  
Խանը կուցաւ քարերի վրայ և լուռ ու մուշ սկսեց  
նայել ներքեւ, դէպի խաւարը և հեռուն, ուր ծովը  
խառնում էր ամպերի հետ, և որտեղից խուլ ճղփիւ-  
սով լողում էին ցայտափշուր կոհակները, և հողմը փը-  
չում էր՝ տատանելով խանի ալիծածան մօրուքը: Թօ-  
լայկը կանգնած էր նրա յետել՝ լուռ ու անշարժ, ինչ-  
պէս արձանը, և ձեռքերով ծածկել էր դէմքը: Ժամա-  
նակը սահում էր և երկնքի երեսին մէկը միւսի յետե-  
լից լողում էին հողմավար ամպերը: Նրանք ծանր էին  
և սե, ինչպէս խոհերը ծեր խանի, որ պառկած էր ծո-  
վափի բարձր ժայռին:

—Գնանք, հայր,—ասաց Թօլայկը:

—Սպասիր...—շշնջում էր խանը՝ կարծես մի բա-  
նի ականջ դնելով: Ու զարձեալ անցաւ շատ ժամանակ  
և ալիքները շարունակ ճղփում էին ներքեսում. խսկ քա-  
մին թռչում էր ժայռի վրայով՝ աղմկելով ծառերի  
մէջ:

—Գնանք, հայր...

—Սպասիր դեռ...

Խանը գեռ էլի չէր շարժւում այն տեղից, ուր  
կորցրեց իր վերջին օրերի ուրախութիւնը:

Բայց—ամեն բան վերջ ունի.—ուրքի կանգնեց նա  
հզօր ու հապատ. ոտքի կանգնեց, յօնքերը կիսեց և  
խուլ ձայնով ասաց.

—Գնանք...

Նրանք գնացին. բայց շուտով կանգ առաւ խանը:  
—Էլ մէր եմ գնում ես և ինչո՞ւ Թօլայկ, —հարցրեց  
նա որդուն: Ի՞նչպէս ապրեմ այսունետե, երբ իմ ողջ  
կեանքս նրա մէջ էր: Ծերացած եմ ես, այլ ևս ինձ չեն

գուրգուրիւ. իսկ եթէ քեզ ոչ չի սիրում, անմտու-  
թիւն է ապրել աշխարհիս վրայ:

—Դու վառք և հալսառութիւն ունիս, հայր...

—Տնւր ինձ նրա մի համբոյրը, և այդ բոլորն առ  
քեզ: Այդ բոլորը մեռած գանձ է. միայն կնոջ սէրն է  
կենդանի: Զկայ այդ սէրը—մարդս կեանք չունի. նա  
մուրացկան է, և խղճալի է նրա օրը: Մնաս բարեաւ,  
որդեակ իմ, Ալհալլա. Ալլահի օրհնութիւնը թող լինի  
քո գիւխին զիշեր և ցիւրեկ:—Ու խանը դարձաւ դէպի  
ծովը:

—Հայր,—ասաց Թօլայկը, — հայր... — և այլիս  
ոչինչ չկարողացաւ ասել. որովհետեւ ոչինչ չի կարելի  
ասել մի մարդու, որին ժաման է մահը. չես կարող  
նրան ասել մի այնպիսի բան, որ վերադարձնէր նրա  
հոգու մէջ սէր դէպի կեանքը:

—Թոնդ ինձ...

—Ալլահ...

—Նա զիտէ...

Սրագ քայլերով մօտեցաւ խանը ժայռի եղերքին  
և ընկաւ ներքեւ: Զկանգնեցրեց նրան որդին—չհասաւ:  
Ու գարձեալ ոչինչ չէր լսում ծովի կողմից—ոչ աղա-  
զակ և ոչ խանի ընկնելու ձայնը: Միայն ալիքները  
շարունակ ճղփում էին այստեղ, և քամին երգում էր  
վայրենի երգեր...

Դեռ երկար նայում էր ներքեւ Թօլայկ-Ալհալլան  
և ապա լսելի ձայնով ասաց.

—Ի՞նձ էլ այդպիսի սիրա տուր, ով Ալլահ:

Եւ ապա գնաց դէպի զիշերուայ խաւարը...

. . . Այսպէս մեռաւ Մօոլայմա-էլ-Ասվար խանը.  
—և կերիմում խան եղաւ Թօլայկ-Ալհալլան...

## ԷՆԿԵՐՆԵՐ

Յուլիսեան կիզիչ արևը շլացուցիչ փայլով շողշողում էր, ողողելով Սմօլկինա գիւղի հին խրճիթները պայծառ ճառագայթների տարափով: Շատ արե էր մանաւանդ գիւղապետի տան կտրանը, որ, վաղուց չէ, նորոգուած էր գեղին, անուշանոտ, հարթ տախտակներով: Կիւրակէ էր, և գիւղի գրեթէ բոլոր ժողովուրդը դուրս էր լցուել փողոցը, որ ծածկուած էր խիտ կանչով և չորացած ցեխի կոշտերով: Գիւղապետի տան առաջ ժողովուել էր գիւղացիների և գեղջունիների մի ստուար լազմութիւն, ոմանք նատուած էին տան պատին կից հողաթմրի վրայ, ոմանք—ուղղակի գեանին, ուրիշները կանգնած էին. սրանց միջև իրար յետեկց վազվում էին մանուկները, որոնց վրայ մեծերը շարունակ բարկանում էին և կամ մէկ-մէկ շրխացնում:

Բազմութեան կենարօնը կազմում էր մի բարձրահասակ մարգ՝ խոշոր, կախ ընկած ընչացքով: Նայելով նրա արևառ դէմքին, որ ծածկուած էր խիտ ու կոշտ մազերով ու խոր կնճիռների ցանցով, և կեղտոտ, յարդեայ գրակի տակից դուրս թափուած մազերի ալեխառըն փնջիկներին,—այս մարդուն կարել էր վերագրել մօտ յիսուն տարեկան: Նա նայում էր գետնին, և նրա խոշոր ոսկըոտ քթի ծակերը դողողում էին. իսկ երբ նա բարձրացնում էր զլուխը՝ գիւղապետի տանն ուղ-

դելով իր հայեացքը, երևում էին նրա խոշոր, թափածալի, նոյն իսկ մոայլ աչքերը,—նրանք խորն ընկած էին փոսի մէջ. իսկ թանձր յօնքերը ստուեր էին ձըգում ու բբերի վրայ: Նա հագել էր վանքական մօնթի կինամոնագոյն պատառուած կապայ, որ հազիւ ծածկում էր նրա ծնկները և գօտերուած էր պարանով. մախաղը շալակին, երկաթէ ծայրով երկար մահակն աջ ձեռքին, իսկ ձախը ծոցում: Շրջապատողները նայում էին նրան կասկածաւոր, ծաղրով հայացքով, արհամարհանքով և, վերջապէս, առանձին հաճութեամբ նրա համար, որ իրանց յաջողուեց բռնել գայլին՝ նախքան նա կարողանար վնասել հօտին: Նա անցնում էր գիւղի միջով և մօտենալով գիւղապետի պատուհանին, ջուր ինդրեց: Գիւղապետը նրան կվաս տուեց և խօսք բացեց նրա հետ: Սակայն անցորդը շրջիկ ուխաւորների սովորութեան հակառակ՝ պատասխանում էր տհաճութեամբ: Գիւղապետը խնդրեց ցոյց տալ անցագիր. զուրս նկաւ, որ անցագիր չունէր: Ու անցորդին ձերբակալեցին՝ որոշելով նրան ուղարկել զաւառական ոստիկանարանը: Գիւղապետը՝ նրան ուղեկցելու համար՝ ընտրեց հարիւրապետին, և այժմ իր տանից նբա հետ գալիս էր՝ կալանաւորին թողնելով բազմութեան մէջ, որ ծաղրում էր նրան:

Կալանաւորը տեղն ու տեղը մնաց կանգնած ուռենու բնի մօտ՝ իր կորացած մէջքը թինկ տալով նրան:

Բայց ահա տան փոքրիկ զստիկոնի վրայ երևաց մի ծերունի ցաւագար աչքերով, աղուէսի արտայայտութեամբ և ալեխառն սեպաձև մօրուքով: Նա ծանր ու բարակ փոխում էր ոտքերը աստիճանից աստիճան, և նրա կլորիկ որովայնը դանդաղ տատանւում էր եր-

կար, չիթ շապկի տակից: Խսկ սրա յետելց դուրս էր  
ցցուել հարիւրապետի քառանկիւնի մօրուեղ դէմքը:

—Հասկացմար, Եփիմուշկա.—հարցրեց գիւղապետը նրան:

—Ի՞նչ կայ չհասկանալու: Հասկացայ: Ասել է թէ  
ևս պարտաւոր եմ այս մարդուն տանել գաւառապետի  
մօտ և—ուրիշ ոչինչ,—ծիծաղաշարժ լրջութեամբ և  
տփիկ—տփիկ ասելով իւր ճառը, հարիւրապետը աշ-  
քով արեց ժողովրդին:

—Խսկ թռուղթը:

—Թռուղթը—ծցումս հանդիսաւ պառկած է:

—Հա, այդպէս—խրատելով ասաց գիւղապետը և  
աւելացրեց՝ կողքը պինդ քորելով.

—Ուրիմն բարի ճանապարհ, հայդէ:

—Հայդէ: Գնում ենք, չ, հարիկ.—Ժպտաց հա-  
րիւրապետը կալանաւորին:

—Գոնէ մի սայլակ տայիք,—խուլ ճայնով պա-  
տասխանեց սա հարիւրապետի առաջարկութեանը:

—Սայլաւակը, Սրան նայիր: Սյստեղ ձեզ պէս շատ  
անցնորդներ քարշ են գալիս գիւղերն ու հանդերը...  
Այդքանիդ համար ձի որտեղից ճարենք: Ոտքով էլ կեր-  
թաս. հա:

—Բան չկայ, հարիկ, կզնանք,—խօսեց խրախու-  
սելով հարիւրապետը:—Կարծում ես, շատ նեռու է: Շատ-  
շատ—քսան վերստ. չի էլ լինի: Երկուսով մի զլուխ  
գնալով շուտով կհամանք: Յետոյ դու այնտեղ կհան-  
գտանաս...

—Ծակը կդնեն, —ըացաւրեց գիւղապետը:

—Սյդ ոչինչ, —շտապով յարեց հարիւրապետը...—  
Մարդու եթէ դադրած—բեղարած լինի, բանտում էլ կը  
հանգտանայ: Մանաւանդ որ ծակ ասածդ զով տեղ է...  
այս շոգից յետոյ—փառաւոր բան է:

Կալանաւորը ոտից զլուխ չափեց իր ուղեկցին—  
սա ուրախ զուարթ ժպտում էր.

—Դէհ, հարիկ ջան, հայդէ: Մնաք բարին, Վասիլ  
Գավրիլիչ: Գնանք:

—Տէր ընդ քեզ, Եփիմուշկա: Լաւ նայիր:

—Աչքերդ չորս արա, —ասաց հարիւրապետին մեր  
պատանի:

—Է՞ն, երեխայ եմ, ինչ է:

Ու նըանք գնացին պատերի տակով, որ հով լի-  
նի: Կապայ հազած մարդը գնում էր առաջից՝ քայլելով  
սովոր մարդու արագ և տատանուող գնացքով: Հարիւ-  
րապետը մի մեծ մահակ ձեռին՝ գնում էր նրա յետելց:

Եփիմը մի կարճահասակ պնդակազմ գիւղացի էր՝  
բարի, լայնալիր գէմքով, շէկ զզզզուած մօրուքով, որ  
սկսում էր նրա կապտաւուն, պայծառ տչքերից: Նա  
գրեթէ միշտ ժպտում էր՝ բանալով առողջ դեղին ա-  
տամները, և այնպէս կնճռուառմ էր քթի վերեր, որ  
կարծես, ուզում էր փոշտալ: Նա հագել էր աղեամ-  
սրա փէշերքը քշտելով գօտին՝ որ չփաթաթուին ոտնե-  
րին: Գլւին գրել էր մոյդ-կանաչ զլինարկ, որ յիշեց-  
նում էր կալանաւորներինը:

Նրա ուղեկցը գնում էր առջեից, կարծես, բանի  
տեղ չինելով նրան: Գնում էին նըանք նեղ գիւղական  
ճանապարհով, որ գալարւում էր հաճարի ալեծածան  
ծովի մէջ, և ուզերների ստուերները սահում էին ոս-  
կեփայլ հասկերի վրայով:

Հորիզոնի վրայ կապտին էր տալիս անտառի կա-  
տարը. դէպի ձախ անսահման նեռուն ու խորը տա-  
րածում էին արտերը. նրանց մէջ սկին էր տալիս  
գիւղը, աւելի հեռուն ծաւալում էին դարձեալ արտե-  
րը, որոնք ընկղմուած էին կապտաւուն մթութեան մէջ:

Դէպի աջ՝ ուստինիների խմբի յետեից՝ կապոյտ երկնակամարն էր թեսակոխում զանգակատան թիթեղածածկ՝ բայց գեռ չներկած գմբէթը. նա այնպէս պայծառ շողշողում էր արեգակի տակ, որ նայելիս մարդու աչքերը ցաւում էին:

Երկնքի երեսին ճռողում էին արտոյտները, համարի մէջ ժապում էին տերեսփուկները, ու շոգ էր, համարեա խեղոփուելու չափ տօթ: Ուզերների ոտքերից բարձրանում էր փոշին:

Եֆիմուշկան կոկորդը մաքրելով կեղծ ձայնով զեց.

—,,Գե—քհ—да—и սի չեց ո—ո—ո...

,,Ա’ն սի չեց ո—ո տոսկա սերծու մու քետ’?

—Որ չի կալիս, ինչքան կուզես գորիր: Եյ-վախ. . . . ժամանակով երգում էի, հա... Վիշենկիի ուսուցիչը կասէր—դէն, եֆիմուշկա, սկսիր: Ու միասին կը-զէինք: Օրինաւոր տղայ էր...

—Ո՞վ.—թաւ ձայնով հարցրեց կապայ հազած մարդը:

—Վիշենկիի ուսուցիչը.,.

—Վիշենկիի—ազգանո՞ւն է:

—Ո՞վ, եղբայր, Վիշենկի գիւղ է. իսկ նրա ուսուցիչ էր—Պաւել Միխայլիչ: Մարդ եմ ասում—հատը չը կար: Երկու տարի առաջ մեռաւ...

—Զանէլ էր:

—Երեսուն տարեկան չկար...

—Ինչից մեռաւ:

—Պէտք է մատածել, որ վշտից մեռաւ:

Եֆիմի խօսակիցը խէթ-խէթ նայեց նրան և ժպտաց...

—Այ, բանն այսպէս եղաւ, հոգիս, վարժապետ

էր. Եօթը տարի շարունակ սովորեցնում էր. դէն, յետոյ սկսեց հազար: Հազար—հազար, յետոյ դարպաներս ձգեց... Դէն, զիտես, էլի. դարդից խումբի տարուեց: Իսկ տէր Ալէքսէյը չէր սիրում նրան. հէնց որ սկսեց խմել, տէր Ալէքսէյը քաղաքը թուղթ գրեց, թէ բանն այսպէս է—վարժապետը հարբում է. լաւ օրինակ չէ: Քաղաքից էլ պատասխան զրեցին և մի վարժուհի ուղարկեցին: Այսպէս երկար—երկար, ուկրոտ, մեծ քթով զադ էր: Էն, Պաւել Միխայլովիչս տեսաւ—բանը վատ է: Շատ վշտացաւ, թէ, տեսէք, սովորեցրի, սովորեցրի ու... այ դուք անիծաճներ: Ուսումնարանից ուղիղ հիւանդանոց գնաց և հինգ օրից յետոյ հոգին աւանդեց... Հէնց այսքան...

Մի ժամանակ լուռ գնում էին: Անտառը քայլ առ քայլ մօտենում էր ճամբորդներին՝ նրանց աչքին մեծանալով և կապոյտից կանաչի փոխուելով:

—Անտառի միջնով զնանք, — հարցրեց եֆիմի ուղեկիցը:

—Ծայրից կկտրենք մի կէս վերստի չափ: Ի՞նչ կայ որ: Հը: Տեսնում ես: Կախվուխն ես եղել, պատուելի, հապա, տեսնենք:

Ու եֆիմը ծիծաղեց՝ զլուխը խորհրդաւոր կերպով շարժելով...

—Ի՞նչ ես ասում,—հարցրեց կալանաւորը:

Ոչինչ, հէնց այսպէս: Սրան տես: Անտառի միջնով գնանք, ասում է: Միամիտ ես, բարեկամ, ուրիշը լինէր քո տեղակ, էլ չէր հարցնիլ, ուղղակի կքշէր անտառ ու... զիտես, էլի...

—Ի՞նչ:

—Ոչինչ: Է, բարեկամ, քեզ եփած էլ կճանաչեմ, հոգի ջան: Զէ, դու այդ միտքը—անտառի բանը—թնդ:

Թէ կարծում ես—իմ հախից կզատ: Ես քեզ պէս երես  
քին կծալեմ. իսկ քո դէմ մէկ ձեռքով դուրս կզամ...  
Հասկացմար:

—Հասկացայ: Յիմար.—կարճ և աղդու շեշտով  
ասաց կալանաւորը:

—Ի՞նչպէս. մտքինդ հասկացմայ, —յաղթանակով ա-  
սաց եֆիմը:

—Դդում: Ի՞նչ հասկացար որ,—ծաղրելով ժպտաց  
կալանաւորը:

Անտառի բանը, էլի... Հասկանում եմ: Հէսց որ  
անտառ կմտնենք, ես—այսինքն դու—այնտեղ բանհոգի  
կանեմ նրան—այսինքն ինձ.—հա. ու չափ կընկնեմ  
դաշտերն ու անտառները: Այսպէս չէ:

—Յիմար ես...—ուսերը թափ տուեց կալանաւո-  
րը:—Լաւ, ուր պիտի երթամ:

—Այդ արդէն դու գիտես, ուր կուզես:

—Ախր ուր, —եֆիմի ուղեկիցը ոչ այս էր թէ  
սաստիկ բարկանում էր, ոչ այն էր թէ սաստիկ ցան-  
կանում էր իր ուղեկիցից իմանալ—թէ յատկապէս ուր  
կարող էր զնալ:

—Դէհ, ասում եմ, ուր կամենաս, —հանդարտ  
յայտնեց եֆիմը:

Ոչ մի տեղ էլ չունիմ փախչելու, բարեկամ, ոչ  
մի տեղ, —հանդարտ ասաց նրա ուղեկիցը: —Է՞հ:

—Տես, տես, —անվստահութեամբ արտասանեց  
պահապանը և մինչև անզամ ձեռքը թափ տուեց.—  
փախչելու տեղ չկայ: Երկիրը—մեծ: Նրա վրայ միշտ  
մի մարգու տեղ կլինի:

Ի՞նչ ես ուզում: Ուզում ես, որ ես փախչեմ, ի՞նչ  
է:—հետաքրքրուեց կալանաւորը ծիծաղելով:

—Սրան նայիր: Լաւն ես, խօսք չկայ: Կարելի՞

բան է: Դու փախչես, քո տեղակ ում բանտ կդնեն:  
ինձ կնստեցնեն: Ո՛չ, ես... այնպէս, խօսում եմ...

—Շատ երջանիկն ես... ասենք, կարծեմ, լաւ մարդ  
ես,—ասաց եֆիմի ուղեկիցը, ախ բաշելով. եֆիմն իս-  
կոյն համաձայնեց նրա հետ:

—Այդ ճիշտ է, ինձ երջանիկ են համարում մի  
քանիսները... ու թէ լաւ մարդ եմ, այդ էլ ուղիղ է:  
Պարզ մարդ եմ, ահա գլխաւորը: Ուրիշները խօսում են  
շարունակ գլուխ շանց տալով, յետին մտքերով: Ինչիս  
է պէտք: Ես մեն-մենակ մարդ եմ աշխարհիս վրայ:  
Խորամանկութիւն էլ անես—պիտի մեռնիս, արդարու-  
թեամբ էլ ապրիս—պիտի մեռնիս: Դրա համար էլ ես  
միշտ աւելի ուղղութիւն կինստրեմ:

—Այդ լաւ է,—անտարբեր կերպով նկատեց եֆի-  
մի ուղեկիցը:

—Հապա ի՞նչ: Ինչո՞ւ պիտի հողիս ուեմ, երբ ես  
մի չոր-գլուխ մարդ եմ: Ինչպէս ուզում եմ, այնպէս  
էլ ապրում եմ. խելքս կարածի պէս կեանք եմ վա-  
րում... բաս, անունդ ի՞նչ է:

—Անո՞նս: Ասենք թէ իվան իվանով...

—Այդպէս: Հոգեորական ես, ի՞նչ է:

—Ո՛չ...

—Ուզի՞դ: Իսկ ես կարծում էի, հոգեորական ես...  
—Շորերի՞ս ես նայում, ի՞նչ է:

—Այն է որ կայ: Դու իսկ և իսկ փախստական  
վանականի կամ կարգալոյծ եղած տէրուէրի պէս մի  
բան ես... Բայց, այ, գէմքդ յարմար չէ. երեսարքիդ  
նայելով՝ դու զինուորի նման ես... Է՞հ, Աստուած զի-  
տէ, թէ ի՞նչ մարդ ես դու:—Ու եֆիմը մի հետաքր-  
քրուած հայեացք ձգեց նրա վրայ: Սա հառաչեց, գըլ-

խարին ուղղեց, ճակատի քրտինքը սրբեց և հարցրեց  
հարիւրապետին.

—Ծխում ես:

—Ի հարկէ. խնդրեմ բեր:

Նա ծոցից հանեց իւղու քիսան և գլուխը կախ  
զցելով բայց առանց կանգնելով՝ սկսեց ծխախոտը լըց-  
նել ծխամործի մէջ:

—Ահա, ծխիր: Կալանաւորը կանգնեց և թեքուե-  
լով գէպի պահապանի վառած լուցկին՝ այտերը ներս  
քարշեց: Կապրոյտ ծուխը լողաց օդի մէջ:

—Լաւ, ուրեմն դու ի՞նչ մարդ ես. քաղքենի (մԵ-  
անահի) ես, ի՞նչ է:

—Ազնուական եմ...—կարճ կտրեց կալանաւորը և  
թքեց մի կողմը՝ ոսկեփայլ հասկերի մէջ:

—Պահ, այ բան: Հապա ի՞նչպէս որ դու առանց  
անցագըի թրկ ես զալի:

—Հէսց այնպէս:

—Է-հէ: Այսպիսի բան: Երկի, այս տեսակ կեան-  
քը անսովոր է քո ազնուականութեան համար: Եյ  
ջրատար:

—Դէս, լաւ, բաւական է խօսես,—խստութեամբ  
ասաց ջրատարը:

Բայց եֆիմը հետզհետէ աճող հետաքրքրութեամբ  
և կարեկցութեամբ ոտից գլուխ զննում էր անցագիր  
չունեցող մարդուն և մտածման մէջ գլուխը թափահա-  
րելով շանունակում էր.

—Այ-այ-այ: Մարդ որ մտածում է, թէ ի՞նչպէս  
ճակատագիրը խաղում է մարդուս կեանքի հետ: Դէս,  
երկի, ուզիդ որ դու ազնուական ես, զբա համար էլ  
կապմուածք մի տեսակ սիրուն է: Վաղմւց է, որ այս  
օրումն ես:

Սիրուն կազմուածքով մարդը տիրութեամբ նա-  
յեց եֆիմին և ձեռքը նրա կողմը թափ տուեց, ինչպէս  
անում են տաղտկալի բրէտը քշելիս:

—Թաղ, ասում եմ. ի՞նչ ես չաղուի պէս գլուխս  
կպել:

—Դէս, լաւ, մի բարկանար,—ասաց եֆիմը հան-  
գուացնելով նրան:—Ես սրաիցս եմ խօսում... շատ բա-  
րի սրաի տէլ եմ:

—Այդ քո բախտն է... բայց որ լեզուդ անդադար  
բլբլում է, այդէլ իմ անբախտութիւնն է:

—Դէս, լաւ, գէն լաւ: Եթէ լոեմ էլ... կարելի է  
և լոկ, եթէ մարդը չի ուզում խօսքդ լսել: Բայց և  
այնպէս դու իզուը ես բարկանում... թէ ես եմ մեղա-  
ւոր, որ քեզ վիճակուեց թափառաշրջիկ կեանք վարել:

Կալանաւորը կանդ առաւ և այնպէս կրծտեց ա-  
տամերը, որ նրա այտոսկրերը ցնցուեցին երկու առւը  
կիւններով, իսկ նրանց վրայի ալեխսառն կոշտ մազկըը  
բիզ-բիզ եղան: Նա ոտից գլուխ չափեց եֆիմին թըշ-  
նամանքով լի կկցած աչքերով:

Բայց նախ բան եֆիմի այս դիմագիծը նկատելը,  
նա նորից չափ ընկաւ խոշոր քայլերով:

Շատախօս հարիւրապետի դէմքը կրում էր ցը-  
րուած մտորմունքի կնիքը: Նա վեր էր նայում, որտե-  
ղից լսում էր արտօյտների դայլայլիկը, և ատամների  
արանքով շուացնելով՝ ձայնակցում էր նրանց իր քայ-  
լերի համեմատ թափ տալով մահակը:

Մօտենում էին անտառին: Նա կանգնած էր որ-  
պէս անշարժ խաւար պարիսպ. անտառից ոչ մի ձայն  
չէր հասնում ուղերների ականջին: Արեն արդէն մայր  
էր մտնում, և նրա թիք ճառագայթները ոսկեղծում  
էին ծառերի կատարները: Ծառերից բուրում էր անու-

շահոս խոնաւութիւն, անտառի մէջ աիրող աղջա-  
մուղջն ու անմռունչ լոռութիւնը զարթեցնում էին ծանր  
սրտամաշ զգացմունք:

Երբ աչքիդ առաջ անշարժ կանգնած է մթագին  
անտառը, երբ նրանում տիրում է խորհրդաւոր անդոր-  
րութիւնը, և ամեն մի ծառ, ասեա, զգաստ լոււմ է  
մի բանի, —այն ժամանակ թւում է, թէ ամրող ան-  
տառը լի է մի տեսակ կենդանի, միայն առժամանակ  
թագնուած բանով: Ու սպասում ես, թէ ահա հետեւալ  
վայրկեանին յանկարծ նրա միջից գուրս կզայ մի ա-  
հագին՝ մարդուս մտքին անհասանելի բան, գուրս կզայ  
և հուժկու ձախով կխօսի բնութեան մեծամեծ գաղտ-  
նիքների մասին:

II

Անտառի եղերքին մօտենալով՝ Եֆիմն ու նրա ու-  
ղեկիցը որոշեցին հանգստանալ և կազմու լայն կոճղի  
մօտ մի կանաչկոտ տեղ նստեցին: Կալանաւորը շա-  
լակից կամաց ցած ըերեց մախաղը և անտարեր կեր-  
պով հարցրեց պահապանին:

—Հաց կուղես:

—Կտաս—կուտեմ, —պատասխանեց Եփիմը ժըպ-  
տալով:

Եւ ահա նրանք սկսեցին լուռ ու մունջ ծամել: Եֆիմն ուտում էր ծանր և շարունակ հառաչում էր՝ դէպի  
ձախ դառնալով, ուր որ է՝ դէպի գաշտը նայելով, իսկ  
նրա ուղեկիցն ամբողջովին ամփոփուած էր փորը կըշ-  
տացնելու գործողութեամբ. շտապով ուտում էր և պինդ  
չպչրպացնում՝ շուտ-շուտ աչքը զցելով իր հացի կտո-  
րին: Մթնում էր, հացարոյսերն արդէն կորցրին իրանց

ուկեգոյն փայլը և դարձան գեղնաւուն—վարդագոյն: Հարաւ—արևմուաքից սողալով երկինք բարձրացան  
փեռկտած ամպեր, որոնց ստուերն ընկնում էր դաշտի  
վրայ, ընկնում էր և սողում հասկերի վրայով դէպի  
անտառը, որտեղ նստած էին երկու մարդու մթին  
ուրուագծերը: Ծառերից էլ երկրի վրայ ձգւում էին  
ստուերներ, ու ստուերները տիրութիւն էին բերում  
մարդու սրտին:

—Փառք քեզ, Տէր,—բացականչեց եփիմը, վե-  
րարկուի ըղանցքի վրայից հաւաքելով հացի փշրանք-  
ները և ափի վրայից լիզելով: —Աստուած կերակրեց—  
ոչ ոք չտեսաւ, ով էլ որ տեսաւ նա էլ չզրկեց: Բարե-  
կամ, մի քիչ նստենք այստեղ: Կհասնենք բանտը:  
Բարեկամը գլխով արեց:

—Հա, այսպէս... Տեղը շատ լաւ տեղ է, ինձ լաւ  
յայտնի... Այ, այնտեղ՝ ձախ կողմը Տուչկով կալուա-  
ծատէրերի բնակարանն էր:

—Ո՞րտեղ,—արագ հարցրեց կալանաւորը՝ դառ-  
նալով այն կողմը, որ կողմը ձեռքը թափ տուեց Ե-  
փիմը...

Հրէն—համ—այն հրուանդանի յետեց: Այս չորս  
կողմը բոլորը նրանցն էր: Շէն օջախ էին, բայց զիւ-  
զացիների ազատութիւնից յետոյ քարուքանդ եղան...  
Ես էլ նրանց գիւղացին էի, —այստեղ բոլորս նրանց  
ձորտերն էինք: Մի գերդաստան էր... ինքը գնդապետն  
էր—Ալէքսանդր Նիկիտիչ Տուչկով: Որդիքն էին—չորս  
եղբայր, —ուր են հիմայ: Ասես՝ քամին քշեց տարաւ  
ինչպէս աշնան տերեւներ: Միայն իվան Ալէքսանդրո-  
վիչն է կենդանի, —այ, քեզ հէնց նրա մօտ եմ տանում.  
Նա գաւառական սատիկանապետ է (становой приставъ)  
... Արդէն ծկրացել է...

Կալանաւորը ծրծաղեց։ Նա ծիծաղում էր խուլ ձայնով, մի տեսակ առանձին ծիծաղով—կուրծքն ու փորը շարժում էին, բայց դէմքը մնում էր անփոփոխ։ միայն կրծտացնող ատամների արանքով դուրս էին թռչում խուլ, հաջոցի նման ձայներ։

Եֆիմը վախենալով՝ կծկուեց և իր մահակը ձեռքին մօտեցնելով՝ հարցրեց։

—Այդ ի՞նչ է։ Զլինի՞ տկարութիւն է գալիս վրադ...

—Ոչինչ չկայ... սա այնպէս... կանցնի։ ասաց կալանաւորը ընդհատ ձայնով, բայց քաղցրութեամբ։ Դու պատմիր...

—Հա... Ահա թէ ինչպիսի բաներ։ կային այդ պարոն Տուչկովսկերը, և այժմ չկան... Որը մեռաւ, որը կորաւ, այնպէս որ նրանց մասին ոչ մի տեղեկութիւն չկայ։ Մանաւանդ մէկը կար նրանցից... ամենից վոքրը... Վիկտոր էին ասում... Վիտեա։ Մենք նրա հետ ընկերներ էինք... Հէնց այն ժամանակ, երբ ճորտերի ազատութիւնն յայտարարուեց, մենք կինէինք մօտ տասչորս տարեկան... Ի՞նչ տղայ էր, է, Աստուած ողորմի հոգուն... Ուսկի էր, ոսկի... Ուրտեղ է այժմ։ Տեսնես, կինդանի է, թէ ոչ։

—Ի՞նչով լաւ էր, կամացուկ հարցրեց Եֆիմին նրա ուղեկիցը։

—Ամեն բանով,—բացականչեց Եֆիմը։ Գեղեց կութեամբ, խելքով, բարի սրտով... Ա՛խ դու տարօրինակ տղայ, հոգւոյս հատոր։ Մի տեսնէիր այն ժամանակ մեզ երկուսիս... այ, այ, այ։ Ի՞նչ խաղեր էինք խաղում, ինչ ուրախ կեանք էինք վարում, էլ դու պըրծար։ Մէկ էլ կիանչէր—Եֆիմկա, գնանք որսի։ Մի հրացան ունէր, տօնին հայրն էր նուիրել, շատ անգամ ես էի տանում հրացանը։ Ու չափչփում էինք ան-

տառները երկու—երեք օրովկ, Գալիս էինք տուն—նրան՝ նախատինք, ինձ—քօթակ։ Մէկ էլ տեսար, հետևեալ օրը գարձեալ—Եգիմիա—սունկի գնանք։ Թուչուններ զարկած կինէինք—հազարով, սունկ ժողոված կինէինք—փթով։ Պատահում էր, թիթեաներ, բղէզներ էր բըռնում և արկղի մէջ՝ գնդասեղների վրայ շարում... Հետաքրքիր էր։ Կարգալ էր սովորեցնում ինձ... Եֆիմկա, ասում է, ես քեզ կարդալ պիտի սովորեցնեմ։ Լաւ, Ու սկսում էր։ Ասա տեսնեմ—ա։ Ես գոռում եմ—ա-ա։ Մի ծիծաղ, մի ուրախութիւն։ Սկզբում սա մի հանաք էր —դէս, գիւղացին գիրն ի՞նչ պիտի անի... Ու ինձ ըսկում է խրատելը։ «Քեզ, այ յիմար, նրա համար է ազատութիւն տուած, որ սովորես... գիր սովորես, ասում է, հիսուկանաս, ի՞նչպէս պէտք է կեանք վարել և որտեղ պէտք է արդարութիւն փնտրել»... Յայտնի բան է, տղայ ասածդ տեսածն ու լսածը վերցնում է։ Երկի, մեծերից շատ է լսել այդպիսի խօսքեր, ինքն էլ սկսել է խօսել։ Ի հարկէ այդ բոլորը դատարկ բան է... Բանը մարդուս սիրան է. գիրն էլ այնտեղ է, ճշմարտութիւնն էլ... Նա ամեն բան լաւ է տհնում... Այսպէս ահա նա ինձ սովորեցնում է... Այնպէս կպաւ այդ բանին—չէր թողնում, որ շունչ քաշեմ։ Հոգիս հանում էր։ Աղաչում էի, պաղատում, վիտեա, ասում եմ, գիրն իմ ուժից վեր է, ասում եմ, չեմ կարող էլի... Բայց նա ինձ վրայ այնպէս էր գոռում։ Հայրիկի մտրակով կը ձաղտեմ—սովորիր։ Լաւ, լաւ, սովորեմ։ Սովորում եմ... Մի անգամ դասից փախայ, ուղղակի տեղիցս վեր թռայ ու... պոկ եկայ, եւ տես, ամբողջ օրը հրացանը ձեռին որոնել է ինձ։ ուղում էր սպանել, Յետոյ ինձ ասում էր։ Եթէ այն օրը քեզ պատահէի, կապանէի, ասում է։ Այ թէ ինչպիսի թունդ տղայ էր։ Կրակ էր, կրակ։

—իսկապէս «ազայ»... ինձ շատ էր սիրում. հոգին չէր խնայում... Մի անգամ հայրս երասանով մէջքս ձաղտեց. և երբ նա, Վիտեան, տեսաւ այս, մեր տուն եկաւ.—Տէր Աստուած—ինչ պատահեց.—գոյնը թռաւ, դողդոզաց. բռունցքները սեղմելով հասնում է հօրս վրայ: Դու, ասում է, ինչպէս համարձակուեցիր: Հայրս ասում է—գէն, ես հայր եմ: Ընը. դէն լաւ, ես մենակ դուխ չեմ հանել բայց քո մէջքն էլ կընկնի նոյն օրին: Այս խօսքերից յետոյ լաց եղաւ և հեռացաւ... Եւ ինչ կասես, հարիկ, իր խօսքը կատարեց: Մեր գիւղացիներին համոզեց, ինչ է,—չգիտեմ. միայն մի անգամ հայրս տուն եկաւ. տեսնեմ—տնքտնքում է. շապիկն ուզում է հանել, կպել էր մէջքին... Հայրս շատ բարկացաւ ինձ վրայ այդ օրը.—քո երեսից ինչ քաշեցի, ասում է, աղայի պնչ: Ու տուր թէ կտաս—մի լաւ քօթակից ինձ... Հայ, բայց աղայի պոչ զուր ասեց.—ես պոչ չէի...  
—Ճիշտ է, եֆիմ, դու պոչ չէիր.—հաստատեց կալանաւորը և ամբողջովին ցնցուեց.—այդ հէնց այժմ էլ երեսում է. դու աղայի պոչ չէիր կարող մինել,—մի տեսակ շտափելով աւելացրեց նա:

—Հէնց այդպէս էլ է.—բացականչեց եֆիմը:—Ես պարզապէս սիրում էի նրան՝ Վիտեային... Ինչպիսի աստղով աղայ էր. բոլորն էլ նրան սիրում էին, ոչ թէ միայն նու... Պատահում էր, որ զանազան ճառեր էր առում... չեմ յիշում—ինչ, երեսուն տարուց աւելի է անցել... Աստուած իմ, ուր է նա այժմ: Եթէ կենդանի է, երեխ, բարձր դիրք ունի կամ... կեանքի ճահճի մէջ տապկառում է... Մարդու կեանքն էլ ինչ բան է: Եռում է, եռում—բայց էլի մի շնորհքով բան չի դուրս գալիս... Այն ինչ մարդիկ կորչում են... մեղք չեն մարդիկ, մինչեւ անգամ մահու չափ մեղք են: Եֆիմը խո-

րը հոգւոց հանկեղով գլուխը կախեց... Ռոպէաչափ լսութիւն աիրեց:

—Ինձ էլ խղճառում ես,—ուրախ-զուարթ հարցրեց կալանաւորը, որի ամբողջ դէմքն այնպէս փայլում էր հեղահամբոյր ժպիտով...

—Այ իսելօք. աիր հնց չխղճամ քեզ,—բացականչեց եֆիմը:—Մի մտածիր, թէ ինչ ես գու; Եթէ զութափառում ես, ասել է, երեխ աշխարհիս վրայ ոչինչից ոչինչ չունիս. ոչ տուն ու տեղ. ոչ էլ ազգ ու երամ... ոչ գիտէ, մի մեծ մեղք էլ շարակած՝ ման ես գալիս: Ո՞վ գիտէ: Մէկ խօսքով ջրատար մարդ ես...

—Այդպէս է.—ասաց կալանաւորը...

Ու նրանը դարձեալ լսեցին: Արևին արդէն մայր էր մտնում, և ստուերները խտանում էին: Օգի մէջ բուրում էր խոնաւ հողի, ծաղիկների և անտառի բորբոսնի հոտը... Նրանք երկար նստած էին լուռ ու մունջ:

—Ե՞ս, այստեղ որքան էլ որ լաւ է, բայց և այնպէս պէտք է զնալ... Մեզ զեռ ութը վերստի չափ մնում է... Հայդէ, հարիկ, վեր կաց:

—Մի քիչ էլ նստենք,—խնդրեց հարիկը...

—Ես գէմ չեմ, ինքս էլ սիրում եմ գիշերով անտառի մօս լինել... Բայց թէ Ի՞ր կհասնենք մենք ուստիկանարնը: Կհայիսյին ինձ՝ թէ ուշացար:

—Ոչինչ. չեն հայիսյիլ...

—Եթէ դու միջնորդէս, —ծիծաղեց եֆիմը:

—Կարսղ հմ:

—Զէ—մի ի՞նչ:

—Ի՞նչ կայ որ:

—Օյինբազի Գաւառական ոստիկանապետը քեզ ցոյց կտայ:

—Կոռւարանը է:

—կատաղի է: Եւ ճարպիկ է—բռունցքով ական-  
ջակոթին դրեց թէ չէ, միենոյն է թէ գերանդիով ոս-  
ներին տար:

—Լաւ, մենք նրան կպատասխանենք,—վաստահու-  
թեամբ ասաց կալանաւորը՝ բարեկամաբար ձեռքը խը-  
փելով պահնորդի ուսին:

Այս արդէն մտերմական էր և գուր չեկառ Եֆի-  
մին: Ինչ կուզէ լինի, բայց և այնպէս նա իշխանաւոր  
է, և այս միամիտ մարդը չպիսի մոռանոյ, որ Եֆիմի  
ծոցը կայ պղնձեայ նշան: Եֆիմը ոտքի կանգնեց, մա-  
հակը վերցրեց, պղնձեայ նշանը կրծքի ուղիղ մէջ տե-  
ղը կախեց և խստութեամբ ասաց.

—Վեր կաց. գնանք:

—Չեմ գալիս, —ասաց կալանաւորը:

Եֆիմը շփոթուեց և, աչքերը չուելով, կէս բոպէի  
չափ լրեց՝ չհասկանալով, թէ ինչից կալանաւորն յան-  
կարծ այդպիսի կատակասէր դարձաւ:

—Դէհ, մի ալարկոտիր, գնանք.—այժմ արդէն ա-  
ւելի մեղմաբար ասաց նա:

—Չեմ գալիս, —վճռողաբար կրկնեց կալանաւորը:

—Այսինքն, ի՞նչպէս թէ չսո գալ—զարմացած բը-  
դաւեց Եֆիմը բարկութեամբ:

—Այնպէս: Այստեղ ուզում եմ քեզ հետ գիշերել...  
Հապա, մի խարոյկ վառիր...

—Ես քեզ գիշերել խրատ կտամ. մի խարոյկ կվա-  
ռամ մէջքիդ, որ քէֆդ կգայ. —սպանում էր Եֆիմը:  
Բայց ներքուստ նա զարմանում էր: Մարդն ասում է  
չեմ գալ, բայց ոչ մի դիմագրութիւն չի ցոյց տալիս.  
Կուի չի մտնում, պառկած է գետնին, և ուրիշ ոչինչ:  
Ի՞նչ անէ:

—Մի բղաւիր, Եֆիմ, —հանդարտ խորհուրդ տու-  
եց կալանաւորը:

Եֆիմը դարձեալ լռեց և կալանաւորի գլխի վե-  
րելը մէկ կամ միւս ոտքի վրայ կանգնելով՝ աչքերը չը-  
ռած նրան էր նայում, նայում էր—նայում և ժպտում:  
Եֆիմը ծանր ու բարակ մտածում էր, թէ այժմ ինչպէս  
պիտի վարուի ինքը:

Եւ ինչից այս թափառաշրջիկը, որ շարունակ  
դաժան ու չար էր, այժմ յանկարծ այսպէս երես առաւ-  
թիչ է մնում, մարդ վրայ հասնի, թևերը որորէ, մի  
քանի հատ վզակոթին տայ, պրծաւ—գնաց: Ու Եֆիմը  
ամենախիստ՝ որքան կարող էր, իշխանաւորի տոնով,  
ասաց.

—Դէհ, անկեալ, այ ինչ.—ինչքան որ մեծ-մեծ  
բրդեցիլ՝ բաւական է: Վեր կաց: Թէ չէ քեզ կկապ-  
կապեմ, այն ժամանակ ուզես-չուզես կզնաս: Հասկա-  
ցա՞ր: Դէհ, անս—կծեծեմ:

—Ի՞նձ, —ծիծաղեց կալանաւորը:

—Բաս ի՞նչ ես կարծում:

—Վիսեա Տուչկովին կծեծես, Եֆիմ:

—Պայ քո տունը շինուի, —զարմացած բղաւեց-  
Եֆիմը: —Վա, ի՞նչ ես ասում. դրուստ: Ինչ է, ինձ հա-  
մար ներկայացնում ես տալիս: Այ դու...

—Դէհ, բտւական է բղաւես, Եֆիմուշկա, ժա-  
մանակ է, որ ինձ ճանաչես, հանդարտ ժպտալով  
ասաց կալանաւորը և ոտի կանգնեց: —Դէհ, բարե, հը:

Եֆիմը յետ-յետ գնալով՝ հեռացաւ իրան մեկնած  
ձեռքեց և աչքերը չորս արած նայում էր կալանաւորի  
գէմքին: Յետոյ նրա շրթունքները դողդողացին և  
գէմքն ամբողջովին կնծոռուեց.

—Վիկտօր Ալէքսանդրովիչ... ուղիղ որ դուք էք,  
—շնչալով հարցրեց նա:

—Կամենաս—թղթերս ցոյց տամ: Կամ թէ աւելի լաւ է, հին բաներն յիշեցնեմ... Հապա յիշնում ես, ինչպէս դու Ռամանսկի անտառում գայլի որջն ընկար: Եւ ինչպէս ես բոյնի համար ծառը բարձրացայ և գլխիվայր կախ ընկայ ճիւղից: Եւ ինչպէս պառաւ Պետրովնայից սերուցք էինք գողանում: Նա մեզ հէքիաթներ էր պատմում:

Եֆիմը ծանր-ծանր նստաւ գետնին և անուշաղիր ծիծաղեց:

—Հաւատացի՞ր.—Հարցրեց նրան կալանաւորը և նոյնպէս նստեց նրա կողքին՝ նրա դէմքին նայելով և իր ձեռքը նրա ուսին դնելով: Եֆիմը լուռ էր: Շուրջը բոլորովին մթնեց: Անտառում բարձրացաւ անորոշ շրջեն և աղմուկ: Հեռուն, ուր որ է, խիտ անտառի մէջ, տիսուր գեղգեղեց գիշերային թռչունը: Ամպը սողաց անտառի վրայ հաղիւ նկատելի շարժումով:

—Ի՞նչ, Եֆիմ, ուրախ չե՞ս, որ հանդիպեցինք: Թէ ուրախութիւնից քեզ կորցրիր: Ե՞յ դու արդար հոգի: Ինչ որ տղայ ժամանակդ էիր, հիմա էլ նոյնն ես . . . Եֆիմ: Վա, տո խօսիր է, անձոռնի:

Եֆիմն սկսեց շուտ-շուտ ինչել վերարկուի քղանցքի մէջ...

—Է՞, բարեկամ, այ-այ-այ—յանդիմանական ձեռվ գլուխը շարժեց կալանաւորը: Ի՞նչ խարար է: Ամաշիր: Յիսուն տարին տակդ ես դրել ու այդպիսի ծռափ—պոտի բանելով ես պարապում: Դէն, թնդ.՝ու բռնելով նրա ուսերը, թեթևակի թօթուեց նրան: Պահսորդը ծիծաղեց գողգոջուն քրքիջով և, վերջապէս, խօսեց առանց իր ընկերոջ երեսին նայելու:

—Լաւ, ես—ի՞նչ...—ուրախ եմ... Ուրեմն այս դժուք էք, որ կաք: Ի՞նչպէս ես այս բանին հաւատում:

Դուք և այսպիսի բան: Վիտեան... այս կերպարանքով: Բանտ են տանում... Անցագիր չունի... Ցամաք հաց է ուտում... ծխախոտ չունի... Տէր Աստուած: Ախր այս կմրգ է: Եթէ ես քո տեղը լինէի, դու գոնէ հարիւրապիտ... Էլի ցաւ չէր: Թէ չէ ի՞նչ դուրս եկաւ: Ես ի՞նչպէս նայեմ քո երեսին: Քեզ միշտ ուրախութեամբ մըտարերում էի...—Վիտեա, մոտածում էի երբեմն... ու սիրոս թրպրտում էր: Խակ հիմայ—առ քեզ: Տէր Աստուած, եթէ այս բանը մարդկանց պատմես, չեն էլ հաւատաւ:

Նա քթի տակը փնթփնթում էր իր ընդհատ խօսքերը՝ միշտ իր ոտքերին նայելով, և շարունակ ձեռքը զցում էր երբեմն կրծքին, երբեմն կոկորդին:

—Հա, դու մարդկանց այս մասին ոչինչ մի էլ ասիր. հարկաւոր չէ: Եւ թնդ, բաւական է... Իմ մասին անհանգիստ մի լինիր... Թղթեր ունիմ. ես զիւղապետին ցոյց չտուի, որ ինձ այստեղ չճանաչէին... Եղրայրս ինձ բանտ չի նստացնիլ, այլ, ընդհակառակը, կօգնէ ինձ ոտքի կանգնելու... Կգնամ նրա մօտ, և մանց երկուսով էլի որսի կգնանք: Տեսնեմ ես, ինչպէս ամին բան լաւ է գնում:

Վիտեան այս ասում էր քաղցրութեամբ, այն տոնով, որով մեծերը փալաքշում են վշտացած մանուկներին: Ամպերի հանդէպ՝ անտառից ծագեց լուսինը, և ամպերի եղերքները՝ նրա ճառագայթների տակ արծաթի պէս պապղալով, շողակնի մեղմ փայլ ստացան: Հացարոյսերի մէջ ճլւում էին լորերը, որտեղ որ է ճըռճուացնում էր լորամարգին... Գիշերային խաւարը գալով աւելի թանձրանում էր:

—Այդ ճիշտ է...—կամաց սկսեց Եֆիմը.—Իվան Ալէքսանդրովիչը հարազատ եղբօր մասին կհողայ, և

գուք, ասել է, նորից ոտքի կկանգնէք։ Այդ բոլորն ուղիղ է... Որսի էլ կզնանք... Բայց... չն չէ... Ես մտածում էի, թէ ի՞նչ գործեր կկատարէք դուք կեանքի մէջ։ Բայց ահա ինչ գուրս եկաւ...»

Վիտեա Տուչկովը ծիծաղեց.

—Ես, եղբայր Եֆիմ, էլի բաւական գործ արել եմ... Կալուածքներիս իմ մասը ծախսեցի, ծառայութեան մէջ եօլայ չգնացի, գերասան եղայ, փայտի առատրի մէջ գործակատար եղայ, յետոյ ես ինքս գերասաններ պահեցի, պարտքի տակ ընկայ, մի գործի մէջ խառնուեցի. յետոյ եղած-չեղածս այրուեց... Է՞իս Ամեն բան էլ եղաւ... Եւ—ամեն բան անցաւ։

Կալանաւորը ձեռքը թափ տուեց և բարեսիրտ կերպով ծիծաղեց։

—Ես, եղբայր Եֆիմուշկա, այժմ այլ ևս «աղայ» չեմ... աղայութիւնից բժշկուեցի։ Հիմայ մենք իրար հետ այնպէս կապրինք. չէ՞ Հա, դէ՞ զարթիր։

—Ես... հչինչ,—խօսեց Եֆիմը ընկճուած ձայնով, —միայն ամաչում եմ։ Քիչ առաջ աւել-պակաս բաներ խօսեցի... կոշտ ու կոպիտ խօսքեր և առհասարակ... Գիւղացի եմ, գիտէք էլի... Է՞ն, ասում էք, այստեղ գիշերենք։ Ուրեմն ես խարոյկ սարքեմ...»

—Գործիր...»

Կալանաւորը մէջքի վրայ գետնին մեկնուեց, իսկ հարիւրապետն անյայտացաւ անտառի մէջ, որտեղից իսկոյն հնչեց ձիւղերի ճարճատիւնը և շրշիւնը։ Շուտով Եֆիմը երեաց մի գիրկ ցախ հետք. իսկ մի բոպէից յետոյ բարակ ձիւղերից կազմուած փոքրիկ կոյտի վրայ ուրախ-զուարթ գալարւում էր բոցը։

Վաղեմի ընկերները մտածման մէջ նայում էին նըրանչնստելով դէմ առ դէմ և հերթով ծխելով ծխամորճը։

—Ճիշտ այնպէս, ինչպէս առաջ էր, —ախուր-ալրա-տում ասաց Եֆիմը։

—Միայն ժամանակն այն չէ, —ասաց Տուչկովը։

—Հա, կեանքն այժմ աւելի խիստ է։ —Հրէդ, այինչպէս ձեզ... արորել է...»

—Էդ, ասենք, զեռ յայտնի չէ, —նա ինձ է տրուել, թէ ես նրան... —քթի տակը ծիծաղեց Տուչկովը։ Լոռութիւն...»

Երանց յետել մեղմ շնչոցով բարձրանում էր անտառը իրու մի խաւար պարիսպ, ուրախ ճարճատում էր խարոյկը, նրա շուրջն անմոռւնչ պարում էին ստուերները, և դաշտի վրայ հանգչում էր անթափանցելի խաւարը...»

1897



# ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ

Ա. ԳՐԲՈՅՑԿՈՒՄ ՆԿԱՏՈՒԱԾ

Կարեւոր Վրիպակները

Ել. տող տպուած է պէտք է լինի

13	9 դ.	առօրեալ	առօրեալի
"	1 ն.	բիթ	բիծ
21	12 դ.	հոգու սրբութիւն	հոգու արիութիւն
26	8 ն.	նրանից	նրանցից
28	6 ն.	շատ մի մտածի՛ր	շատ մտածի՛ր
30	10 դ.	ինչ	ինչն
"	12 դ.	անել	ասել
"	5 ն.	շփոթուելը	շփոթելը
"	7 ն.	արիւն էր տալիս	արիւն էր լալիս
37	2 ն.	Դաղի և աղի	Հողի և աղի
38	7 դ.	Մի ծածկող զօրութիւն	Մի ծակծկող չորութիւն
"	11 ն.	պատասխանը	տախասանը
40	11 դ.	Գոռնէիք	Գոռնէինք
46	1 դ.	Զերմից էլ, Աֆօնից էլ — Զերմից էր, որ Աֆօնից էլ	
53	11 դ.	հասոկաւ	հանդաւ
57	11 դ.	լուսագոյն	շառագոյն
74	14 ն.	Գրանց	Գրանց



ԳՐԱԴԱՐԱՆ

L O S U E S b A H E L

Թարգմանական գրադարանի ա. գրքովեր  
ՄԱՐՏԻՆ ԳՈՐԿԻ—պատմութեալիք—20 կող.

ԳԻՆՆ Է 10 ԿՈՊ.

Վաճառառութեալ բուհը գրամագումարայներութեալ

3504

ՊՕ. 1 3

Հայաստանի Ազգային գրադարան



NL0435452

